ԱԿՆՀԱՅՏՆ՝ ԱՆՀԱՎԱՏԱԼԻ

(Ակադեմիկոս Գեորգ Աբելի Բրուտյանի 85-ամյա հոբելյանը)

Դժվարանում եմ հավատալ, որ իմ թանկագին ուսուցիչ, հռչակավոր փիլիսոփա և տրամաբան ակադեմիկոս Գեորգ Աբելի Բրուտյանի 85 տարին է բոլորել: Չէ՞ որ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանն այսօր էլ աշխատում է նույն եռանդով, որով ես տեսել եմ նրան վերջին 30 տարիների ընթացքում: Նա իր արտակարգ եռանդով շարունակում է կատարել Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի և Հայոց փիլիսոփայական ակադեմիայի նախագահի պատասխանատու պարտավորությունը՝ արդեն 25 տարի անընդմեջ: Դրա հետ մեկտեղ ակադեմիկոս Բրուտյանը ժամանակ է գտնում աշխատել իր գիտական բազմաթիվ աշխատությունները հրատարակության նախապատրաստելու համար: Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի անդամների գիտական հոդվածների, ժողովածուների հրատարակությունը, որ Գ. Ա. Բրուտյանը նախաձեռնել է դեռևս 1999 թվականից, այժմ հրատարակվում է որպես նշանակալից միջազգային պարբերական: Ակադեմիկոս Բրուտյանը ժամանակ չի խնայում փիլիսոփաների երիտասարդ սերնդին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար: Վերջերս լույս տեսավ Գ. Ա. Բրուտյանի կողմից կազմված «Փոխակերպական Տրամաբանություն» մեծածավալ ժողովածուն. հեղինակների թվում էին նաև Երևանի պետական համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի մի շարք ուսանողներ: Ուսանողների ինքնուրույն փիլիսոփայական մտքի այդ նվաճումները պատահական չի կարելի համարել, քանի որ, դեռևս 1990 թվականից ակադեմիկոս Բրուտյանը Հայոց փիլիսոփայական ակադեմիային առընթեր ստեղծել է Երիտասարդ հասարակագետների ընկերակցություն, որը մշտապես մասնակցել է ինչպես Փիլիսոփայական ընկերության տարեկան գիտաժողովներին, այնպես էլ՝ ակադեմիկոս Բրուտյանի կողմից կազմակերպված միջազգային համաժողովներին: Ի դեպ, 1987 թ. Գ. Ա. Բրուտյանի հիմնադրած Հայոց փիլիսոփայական ակադեմիան աշխարհում այսօր գործող փիլիսոփայական ակադեմիաներից հնագույնն է:



Ես լավ եմ հիշում, թե ինչպիսի ոգևորությամբ էին համակվել փիլիսոփայական ֆակուլտետի ուսանողները, երբ նրանք մասնակցում էին Գ. Ա. Բրուտյանի կողմից կազմակերպված «Փաստարկման տեսություն» միջազգային գիտաժողովին (Սևան, 1985): Մեզ բոլորիս՝ գիտաժողովի մասնակիցների

վրա մեծ տպավորություն գործեց Գ. Ա. Բրուտյանի բացման խոսքը, որում նա հանգամանորեն լուսաբանեց փաստարկման տեսության սկզբունքային բնութագրերը և տեսության հետագա հետազոտությունների հիմնական ուղղությունները: Մեծ հետաքրքրությամբ լսեցինք նաև արտասահմանյան հայտնի փիլիսոփաների զեկուցումները: Բայց ուսանողներին հատկապես հուզեց այն հանգամանքը, որ նրանք պետք է զեկուցեին իրենց սեփական գիտական արդյունքների մասին: Այդ առումով ուսանողները հսկայական օգուտ քաղեցին փաստարկման տեսության մեծագույն գիտակ Գ. Բրուտյանի դիտողություններից և խորհուրդներից:

Պրոֆեսոր Բրուտյանն արտակարգ հոգատարությամբ է մշտապես վերաբերվել իր ասպիրանտներին, որոնց թվում էր նաև տողերիս հեղինակը: Գիտական կոչումների են արժանացել Գ. Բրուտյանի ավելի քան 30 ասպիրանտներ: Նրանցից շատերը դարձել են նկատելի դեմքեր Հայաստանի փիլիսոփայական կյանքում և արտասահմանյան երկրներում:

Ակադեմիկոս Բրուտյանը միշտ էլ աչքի է ընկել իր մասշտաբային նախաձեռնություններով: Եվ այսօր էլ նրա նախաձեռնություններն արտակարգ են և հիացնող:

Թվարկված մեր օրերիս նվաճումներն են պատճառը, որ ես չեմ կարողանում հավատալ լսածիս: Եթե Գ. Ա. Բրուտյանն աշխատում է նույն եռանդով և արդյունավետությամբ, որով նա գործել է վերջին երեք տասնամյակների ընթացքում, ապա ինչպե՞ս է հնարավոր, որ նրա տարիքը անցած լինի 50-ից:

Մտորելով ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի նվաճումների շուրջ՝ հիացմունքի և պարծանքի զգացմունքով է մարդ տոգորվում: Փիլիսոփայական գիտության բազմազան ասպարեզներում Գ. Ա. Բրուտյանը կատարել է պատմական նշանակություն ունեցող ներդրումներ: Դեռևս որպես երիտասարդ գիտնական, նա աչքի ընկավ արդի փիլիսոփայության հիմնական ուղղություններից մեկի՝ լեզվի փիլիսոփայության խորամիտ ու հանգամանալից վերլուծությամբ: Ի զարմանս բոլոր մասնագետների՝ տաղանդավոր հայ գիտնականը կարողացավ կամուրջ կառուցել լեզվագիտության և արդի ֆիզիկայի առավել առաջադեմ տեսական համակարգի՝ քվանտային մեխանիկայի միջև: Խիզախ գիտնականը համաշխարհային փիլիսոփայական հասարակությանը ներկայացրեց իր կողմից առաջադրված «Լեզվական լրացչության սկզբունքը»: Նա ապացուցեց, որ տարբեր լեզուների արտահայտչական միջոցները լրացնում են միմյանց: Միայն տարբեր լեզուների արտահայտչական միջոցների միասնությունն է հնարավոր դարձնում աշխարհի երևույթների լրիվ և ճշգրիտ ճանաչումը: Զարգացնելով իր հիմքային սկզբունքը՝ հայ գիտնականը համաշխարհային փիլիսոփայական մտքի դարավոր պատմության մեջ առաջին անգամ կիրառեց փորձարարական հետազոտության արգասավոր մեթոդը: Նա կռահեց, որ թարգմանելով տվյալ լեզվի նախադասությունները մի այլ լեզվի և այնուհետև այդ լեզվի ստացված նախադասությունները հետ թարգմանելով առաջին լեզվի միջոցով՝ կարելի է հայտնաբերել լեզուների փոխհարաբերության մի շարք կարևոր յուրահատկություններ: Գ. Ա. Բրուտյանի համարձակ գիտական

հիպոթեզը լիովին հաստատվեց Ճապոնիայի մի շարք համալսարաններում 1982 թ. կատարված «լեզվափիլիսոփայական փորձերով»:

Ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի մյուս նշանակալից ներդրումը կատարվել է տրամաբանության բնագավառում: Խոսքը նրա կողմից առաջարկված բազմատրամաբանության գաղափարի մասին է: Ուսումնասիրելով XX դարում մշակված բազմաթիվ ու բազմապիսի տրամաբանական գաղափարները՝ Գ. Ա. Բրուտյանը ցույց տվեց, որ տրամաբանությունը գիտական հետազոտության իր գործառույթը կարող է իրականացնել լոկ որպես տարբեր բնույթի և նպատակի տրամաբանական համակարգերի միասնություն: Հայ գիտնականի գաղափարն առաջին անգամ ներկայացվեց մասնագետների ուշադրությանը 1967 թ. Օքսֆորդի համալսարանում կարդացած նրա դասախոսության մեջ: Բազմատրամաբանության գաղափարն այնպիսի մեծ տպավորություն գործեց Մեծ Բրիտանիայի փիլիսոփայական հասարակության վրա, որ բրիտանական աշխարհահռչակ "Mind" փիլիսոփայական ամսագիրը, որի էջերում հրատարակվելը մեծ պատիվ է յուրաքանչյուր փիլիսոփայի համար, իր սեփական նախաձեռնությամբ հրատարակեց սովետական գիտնականի զեկուցման տեքստը:

Ես երիտասարդ ասպիրանտ էի, երբ առաջին անգամ կարդացի բազմատրամաբանության գաղափարի ու պատմության մասին: Իմ գիտական ղեկավարի արտակարգ հաջողությամբ դրդված, ես անմիջապես գրեցի հետևյալ երկտողը.

There are many forms of logic,
Let us call it polylogic.
(Տրամաբանության ձևերը բազմապիսի են,
Եվ դրանք ես անվանում եմ բազմատրամաբանություն):

Այդ նույն ժամանակաշրջանում ինձ հայտնի դարձավ մի այլ պատմություն՝ կապված Գեորգ Բրուտյանի անվան հետ: Տրամաբանների մոտ ավստրիացի գիտնական Կուրտ Գյոդելը անհամեմատելի հանճարի նույն համբավն էր վայելում, որին արժանացել էր Ալբերտ Էյնշտեյնը ֆիզիկոսների շրջանում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս երկու աշխարհահռչակ գիտնականներն էլ իրենց կյանքի վերջին տարիներն անցկացրին Պրինստոնի համալսարանում: Բոլորին հայտնի էր նաև, որ Կ. Գյոդելն ապրում էր մեկուսացված կյանքով՝ կտրականորեն հրաժարվելով բոլոր բնույթի հանդիպումներից և հարցազրույցներից: Այս բոլորն իմանալով, ես թերահավատությամբ ընդունեցի իմ ծանոթ ասպիրանտներից մեկի ոգևորված պատմությունը, թե ինչպես է Գ. Ա. Բրուտյանը, 1969 թ. գտնվելով Միացյալ Նահանգներում, հանդիպում ունեցել Կ. Գյոդելի հետ: Ինձ թվաց, թե այստեղ ավելի շատ երիտասարդի հայրենասիրությունն էր խոսում, քան թե իրողությունը: Բայց պատմական հանդիպումն իրոք տեղի էր ունեցել: Ավելին, այդ հանդիպմանը հաջորդել էր նամակագրություն Գյոդելի և Բրուտյանի միջև՝ ձևայնացման մեթոդի հարցերի շուրջ: Կ. Գյոդելի հիշատակին նվիրված ժողովածուում հրատարակվեցին Գյոդելի նամակը Բրուտյանին, որը հոբելյանական կազմակերպչական կոմիտեի խնդրանքով ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը փոխանցել էր ժողովածուի հրատարակիչներին:

Հայ փիլիսոփաներս կարող ենք պարծենալ նաև այն առիթով, որ նախկին սովետական հանրապետությունների փիլիսոփաների բազմաքանակ ջոկատից ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը միակն էր, ով պատվի էր արժանացել մասնակցելու այդ ժամանակաշրջանի բոլոր Համաշխարհային փիլիսոփայական համաժողովներին: Բնականաբար, հարազատ մնալով իր եռանդուն խառնվածքին, ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը Համաշխարհային փիլիսոփայական համաժողովներում ոչ թե «պասսիվ» լսարանի մեջ է տարրալուծվել, այլ յուրաքանչյուր համաժողովում հանդես է եկել զեկուցմամբ և ակտիվորեն մասնակցել է հռչակավոր փիլիսոփաների զեկուցումների քննարկումներին: Դրանցից շատերի հետ նա անձամբ ծանոթ է եղել և երկար տարիներ նամակագրական կապ պահպանել:

Ակադեմիկոս Գ. Բրուտյանը բազմաթիվ գրքեր գրելու հետ միասին, զբաղվել է, այն էլ մեծ հաջողությամբ, գիտակազմակերպական աշխատանքով: Նա եղել է Խորհրդային Միության փիլիսոփայական ընկերության նախագահության անդամ, Հայկական փիլիսոփայական ընկերության նախագահ, միջազգային մի շարք ամսագրերի (ԱՄՆ, Կանադա, Բելգիա, Նիդեռլանդներ, Խորհրդային Միություն և այլն) խմբագրությունների անդամ, ընտրվել է մեկ տասնյակից ավելի ակադեմիաների անդամ: Հայտնի է նրա եռանդուն գործունեությունը որպես Հայաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ԳԱԱ Նախագահության խորհրդական:

Այդուհանդերձ, ըստ իս, ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի գիտական նվաճումների ամենաբարձր ճանաչումը կատարվեց 1980 թվականին Բրայտոնում (Անգլիա) տեղի ունեցած Համաշխարհային փիլիսոփայական համաժողովում: Համաժողովի կազմակերպչական կոմիտեն ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանին նշանակել էր «Փաստարկման տեսություն» կլոր սեղանի ղեկավար, մի հանձնարարություն, որ մինչ այդ չէր վստահվել սովետական փիլիսոփաներից և ոչ մեկին: Խիստ կարևոր եմ համարում նշել, որ Համաշխարհային փիլիսոփայական համաժողովի կազմակերպչական կոմիտեն «Փաստարկման տեսություն» կլոր սեղանի ղեկավարումը հանձնարարեց ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանին ոչ լոկ որպես նրա հեղինակության ճանաչման քայլ: Որոշիչն այստեղ այն հանգամանքն էր, որ Գ. Ա. Բրուտյանի կողմից հիմնված փաստարկման տեսության Երևանյան դպրոցն իր գիտական արդյունքների շնորհիվ արդեն արժանացել էր միջազգային լայն ճանաչման:

Փաստարկման տեսության Երևանյան դպրոցն ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը հիմնեց դեռևս 1970 թվականին: Նախ, նա հրատարակեց ծրագրային մի ծավալուն հոդված, որում վերլուծեց այդ օրերի առավել հեղինակավոր տեսաբան Հ. Պերելմանի հայեցակետը և բացահայտեց այդ մոտեցման թերությունները: Այնուհետև, նա հիմնավորեց փաստարկման գործընթացի՝ իր կողմից մշակված համակարգային հայեցակարգ, որը բացահայտում էր փաստարկման գործընթացի բոլոր էական կողմերը՝ այն չսահմանափակելով միայն ապացուցման և հիմնավորման խնդիրներով, այլ շեշտադրելով ինչպես համապատասխան համոզմունքի ձևավորման խնդիրը, այնպես էլ ձևավորված համոզմունքներին համապատասխանող

նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործնական քայլերը: Մի հանգամանք ևս, որը մեծ չափով նպաստեց փաստարկման տեսության Երևանյան դպրոցի ձևավորմանը և նրա աշխատանքների արդյունավետությանը: Ես նկատի ունեմ հետագա հետազոտությունների հստակ հարցադրումները, որոնք ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանն ուրվագծեց իր պատմական հոդվածում: Այդ հարցադրումները բացեցին այնպիսի լայն հետազոտությունների հորիզոններ, որ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի կողմից ղեկավարվող ամբիոնի աշխատակիցների մշտական կորիզից բացի Երևանյան դպրոցի հետազոտություններին միացան Հելսինկիի, Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Մինսկի, Վիլնյուսի և բազմաթիվ այլ քաղաքների փիլիսոփաներ:

Փաստարկման Երևանյան կենտրոնը առաջ քաշեց բազմաթիվ նոր գաղափարներ, պարբերաբար հրապարակեց հոդվածների ժողովածուներ, գիտաժողովների թեզիսներ, կազմակերպեց միջազգային գիտաժողովներ: Մերտ համագործակցություն հաստատվեց փաստարկման տեսության ճանաչում վայելող մյուս երկու կենտրոնների՝ Ֆինլանդիայի Տուրկուի համալսարանի տեսական փիլիսոփայության ամբիոնի և Բելգիայի փաստարկման դպրոցի հետ: Փաստարկման տեսության հարցերին նվիրված միջազգային գիտաժողովներ կազմակերպեցին նաև Հելսինկիի համալսարանի տեսական փիլիսոփայության ամբիոնը (Ֆինլանդիա, Տուրկու, 1977) և Բելգիայի փաստարկման կենտրոնը (Բելգիա, 1981): Պարզ է, որ փիլիսոփայական մտքի այս գիտական նվաճումների լույսի ներքո Բրայտոնյան համաշխարհային փիլիսոփայական համաժողովի կազմակերպչական կոմիտեն իր պարտքը համարեց «Փաստարկման տեսություն» հատուկ կլոր սեղան կազմակերպել ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի նախագահությամբ:

Այս բոլոր՝ համաշխարհային ճանաչման արժանացած նվաճումներով հանդերձ, իմ անհատական կարծիքի համաձայն, ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի մեծագույն նվաճումը՝ Փոխակերպական տրամաբանության տեսության ստեղծումն է: Գիտության ժամանակակից փիլիսոփայությունը և մեթոդաբանությունը, հենվելով XX դարի նորագույն բնագիտական գիտելիքների աննախադեպ առաջընթացի իմաստավորման վրա՝ հատկապես հարաբերականության տեսության և քվանտային մեխանիկայի առաջացման կապակցությամբ, եկավ այն հստակ եզրակացության, որ այն գիտական տեսությունն է արժանի բարձրագույն գնահատականի, որը գիտելիքների կոնկրետ շրջանում արմատական փոփոխության, գիտական հեղափոխության աղբյուր է ծառայում: Հենց այդպիսին է ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի Փոխակերպական տրամաբանության տեսությունը:

Գիտության ողջ պատմությունն ապացուցում է, որ հեղափոխական նոր տեսությունը սկզբում ընկալվում է որպես ինչ-որ հերետիկոսական գաղափար: Այնուհետև, նոր տեսության համոզիչ արդյունքների ազդեցությամբ, նոր տեսության ընկալումն էապես փոխվում է և այն սկսում է գնահատվել որպես գիտական լուրջ նվաճում: Եվ, վերջապես, նոր տեսության աննախադեպ հաջողությունները գիտական հասարակության մեջ հաստատում են այն կարծիքը, որ նոր հեղափոխական գաղափարում ոչ մի արտառոց բան էլ չկա, այլ հակառակը, այդ գաղափարը այնքան ակնհայտ

է, որ այլ կերպ հնարավոր էլ չի պատկերացնել: Ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի Փոխակերպական տրամաբանության տեսությանը վիճակվեց անցնել արմատապես նոր տեսության ինքնահաստատման վերը նկարագրված բոլոր երեք փուլերով:

Այդ փուլերն հետևյալն էին: Ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը 1981 թվականին հրատարակեց իր տեսության հիմնական գաղափարները պարունակող հոդված: Խոսքը վերաբերում էր բոլորովին նոր և առաջին հայացքից անմատչելի գաղափարներին: Դրանք էին մտքերի բացահայտ և ոչ բացահայտ ձևերը, տեղեկատվության ենթատեքստային ու համատեքստային ձևերը, փոխակերպական կանոնները և նման դժվար մատչելի այլ հասկացություններ: Նույնիսկ նրա ղեկավարած ամբիոնի անդամները, ովքեր արդեն ընտելացել էին ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի նոր ու անսպասելի գաղափարներին, դժվարացան ընկալել նոր տեսության էությունը և արժեքը: Կարճատև ժամանակահատվածում, 1983 թվականին ռուսերեն լեզվով հրատարակվեց ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի «Փոխակերպական տրամաբանություն» գիրքը, որտեղ նոր տեսությունը ներկայացված էր այնպիսի համոզիչ փաստարկներով և բազմաթիվ օրինակներով, որ և ամբիոնի աշխատակիցները, և ամբիոնից դուրս բազմաթիվ գործընկերներ ընկալեցին նոր տեսության հիմքերը և նրա հետագա զարգացման հեռանկարները: Նոր հեղափոխական տեսության հաղթանակին էապես նպաստեց այն հանգամանքը, որ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը չբավարարվեց մտքերի բացահայտ և ոչ բացահայտ ձևերի, տեղեկատվության ենթատեքստային ու համատեքստային ձևերի վերլուծությամբ, այլ նաև ձևակերպեց հատուկ կանոններ, որոնք հնարավորություն էին տալիս մտքերի բացահայտ ձևերից և կառուցվածքներից սերել մտքերի ոչ բացահայտ ձևեր ու կառուցվածքներ: Հսկայական տպավորություն գործեց այն ստույգ և նրբագեղ եղանակը, որով նոր տեսության հեղինակը կարողացավ լուծել դարավոր պատմություն ունեցող տրամաբանական գիտության դժվարին խնդիրները՝ օգտագործելով Փոխակերպական տրամաբանության կանոնները: Դրանց թվում հատկապես աչքի էր ընկնում կատեգորիկ դատողություններում տերմինների բաշխվածության հիմնախնդիրը, որը մինչ այսօր տանջալից ապրումների պատճառ է բոլոր նրանց համար, ովքեր դերևս չէին յուրացրել Փոխակերպական տրամաբանության հզոր զինանոցը: Փոխակերպական տրամաբանության՝ որպես արմատապես նոր տրամաբանական գիտության վերջնական հաստատման փուլը կայացավ 1998 թվականին, երբ նոր տեսությունը հրատարակվեց անգլերեն լեզվով (տե՛ս Brutian C. Logic, Language and Argumentation in Projection of Philosophical Knowledge. Lisbon, 1998, pp. 54-66):

Հոգեբանությունը հաստատել է, որ տաղանդը բազմակողմանի է: Վերոշարադրածից անմիջականորեն հետևում է, որ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանն աչքի է ընկնում ոչ միայն իր տաղանդի բազմակողմանիությամբ, այլ նաև մտահղացումների խորությամբ և նվաճումների անհասանելիությամբ: Իսկ վերջին բնութագրերը բնորոշ են ոչ թե կարճատև փայլատակող տաղանդներին, այլ ճշմարիտ հանճարներին: Դա նշանակում է, որ ի դեմս ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի, մենք գործ ունենք այն եզակի

դեպքերի հետ, երբ փայլուն և բազմակողմանի տաղանդը միաձուլված է խորը և ճշմարիտ հանճարի հետ: Մեր մշակույթի պատմությունում եղել է միայն մեկ նման օրինակ: Դա մեծատաղանդ և հանճարեղ Դավիթ Անհաղթն էր: Ակադեմիոս Գ. Ա. Բրուտյանը մեր օրերի Դավիթ Անհաղթն է՝ ինչպես իր հետաքրքրությունների վեկտորի փիլիսոփայական-տրամաբանական ուղղվածությամբ և գիտական նվաճումների լայն ծավալով, այնպես էլ՝ միջազգային հաղթանակներով և համաշխարհային փառքով:

Ցանկանանք մեր օրերի հռչակավոր փիլիսոփա ակադեմիկոս Գեորգ Աբելի Բրուտյանին գիտական հանճարի ծաղկման երկարատև տարիներ:

ՌՈԲԵՐՏ ՋԻՋՅԱՆ
(Իսրայել)